ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱՎԱԴՅԱՆ ԷՄՄԱ ԱՇՈՏԻ

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Ռուս-Հայկական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Մարիամ Համբարձումի Ոսկանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Վարազդատի Մաթևոսյան
տնտեսագիտության թեկնածու
Հեղինե Գագիկի Պետրոսյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 04-ին, ժամը 14^{00}-ին, Ռուս–Հայկական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Ռուս–Հայկական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի նոյեմբերի 03-ին:

008 մասնագիտական խորհրդի տնտեսագիտության թեկնածու, դոցենտ գիտական քարտուղար **Ի.Բ. Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Տվյալ հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման հիմնական գործիքներից մեկն է: Դրա արդյունավետությունից է կախված ոչ միայն պետական բյուջեն, այլև համախառն ներքին արդյունքի աճը, առևտրային հաշվեկշռի բարելավումը, զբաղվածության աճը և, ի վերջո, քաղաքացիների բարեկեցությունը:

Հայաստանին անհրաժեշտ է էապես մեծացնել տնտեսական աճը, որը գնահատվում է առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների միջոցով: Չնայած վերջին տարիներին նկատվել է ՀՆԱ-ի և արտահանման նկատելի աճ, որը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով, երկիրը կանգնած է էական ներքին զարգացում ապահովելու զգալի խոչընդոտների առջև: Հարկային քաղաքականությունը կարևոր դեր է խաղում այդ խոչընդոտներին հակազդելու գործում, և հարկման նկատմամբ արդյունավետ մոտեցումը էական դեր ունի Հայաստանի տնտեսական զարգացման համար:

Աշխատանքը վերլուծում է հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապը: Հեղինակի առաջարկած հարկային եկամուտների վերլուծության մոտեցումների միջոցով աշխատանքում գնահատվում է տվյալ կապը:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը կայանում է փոխակերպվող տնտեսության համատեքստում հարկային քաղաքականության և տնտեսական աճի միջև փոխհարաբերությունների ըմբռնման խորացման մեջ: Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է տնտեսական աճի վրա Հայաստանի հարկային քաղաքականության ազդեցության գնահատման մեթոդի մշակման մեջ: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ոչ միայն Հայաստանի, այլև նմանատիպ տնտեսական պայմաններ ունեցող այլ երկրների տնտեսության վրա հարկային քաղաքականության ազդեցության վերլուծության համար:

Տնտեսական աճի վրա հարկային քաղաքականության ազդեցության հարցը արդիական է փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների, հատկապես՝ հետխորհրդային պետությունների համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի հարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական

ցուցանիշների վրա և բացահայտել հարկային քաղաքականության հետագա զարգացման ռիսկերն ու հնարավորությունները: Նշված նպատակի իրականացման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Հետազոտել հարկային համակարգի դերը, գործառույթները և բովանդակությունը,
- Վերլուծել հարկային համակարգի և տնտեսական աճը բնութագրող առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները,
- Համակարգել հարկերի գործառույթները փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների համար,
- Վերլուծել ՀՀ հարկային մուտքերի դինամիկան և ժամանակակից միտումները,
- Ուսումնասիրել ՀՀ հարկային քաղաքականության հնարավոր սցենարները,
- Ելնելով հարկային համակարգի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունից՝ ձևավորել հարկային մուտքերի վերին և ստորին սահմանները,
- Ներկայացնել հարկային բարեփոխումների առաջնահերթ խնդիրները և դրանց լուծման ուղիները,
- Գնահատել հարկային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ հարկային համակարգն է, իսկ առարկան՝ հարկային քաղաքականության արդյունավետ ազդեցության գնահատումը մակրոտնտեսական ցուցանիշների վրա, և դրան առընչվող հիմնախնդիրները:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Որպես հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք ծառայել են հարկային քաղաքականության մասին այդ ոլորտին վերաբերվող գիտական աշխատանքներում տեղ գտած դրույթները և հետևությունները, մեթոդաբանության մշակման հարցերը: Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են հայրենական և արտասահմանյան տնտեսագետների աշխատությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային քաղաքականությունը կարգավորող օրենսդրությունը և իրավական ակտերը:

Հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կառավարության, Պետական եկամուտների կոմիտեի, Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF), Համաշխարհային բանկի (WB) և այլ պարբերական հրատարակվող նյութերը ու տվյալները, համացանցի միջոցով տարածվող տվյալները, ինչպես նաև վերլուծության ընթացքում հեղինակի կողմից ինքնուրույն կատարված հաշվարկները:

Ատենախոսությունում օգտագործվել են համեմատական և համակարգային, կառուցվածքային վերլուծության մեթոդները, և վիճակագրական վերլուծության մեխանիզմներ: Վիճակագրական տվյալների վերլուծությունը իրականացվել է խմբավորման, համադրման, ընդհանրացման, գրաֆիկական մեթոդների կիրառմամբ և ժամանակային շարքերի վերլուծությամբ: Կիրառվել են կոռելյացիոն ու էկոնոմետրիկ մեթոդներ և R ծրագրավորման լեզուն:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա ներկայացվել են հետևյալ հիմնական արդյունքները և նորույթները:

1. Գնահատվել է հարկման մակարդակների միջակայքը: Բացահայտվել է, որ հարկերի խթանիչ գործառույթը ուղեցույց է միջակայքի վերին սահմանի համար, իսկ ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցույց են հարկման մակարդակի միջակայքի ստորին սահմանի համար:
2. Հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ելնելով հարկերի խթանիչ գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը նկարագրող 4 փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, զբաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:
3. Կոռելյացիոն և էկոնոմետրիկ գնահատման միջոցով մշակվել է մոդել և բացահայտվել է հարկային եկամուտների ուժեղ փոխկապվածություն միջին աշխատավարձի հետ, և չափավոր կախվածություն՝ արտահանման և տնտեսական ակտիվության ցուցանիշի հետ:
4. Հումքի արտահանման մաքսատուրքի սահմանման համար մշակվել է մոտեցում և առաջարկվել է որպես ուղեցույց կիրառել բանաձև՝ ձևավորված տվյալ արտադրանքի գնի առավելագույն և նվազագույն մեծությունների վրա:

Հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Իրականացված հետազոտությունների արդյունքում տրվել են

եզրակացություններ և առաջարկություններ Հայաստանում հարկային քաղաքականության արդիականացման, ինչպես նաև դրա արդյունավետության բարձրացման համար՝ Հայաստանում ֆիսկալ, կարգավորիչ և խթանիչ գործառույթների համակարգված իրականացման համար: Դրանք կարող են նպաստել առանցքային մակրոցուցանիշների էական բարելավմանը: Ատենախոսությունում ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և այլ մարմինների կողմից՝ հարկային քաղաքականության բարելավման համար, տնտեսության զարգացման, հարկային բեռի ճշգրտման համար, ինչպես նաև՝ հարկային համակարգում առկա խնդիրների լուծման նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումը: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Ռուս-Հայկական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնում, ինչպես նաև ՀՊՏՀ Ֆինանսների ամբիոնում, և հեղինակի մասնակցությամբ գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական 7 հոդվածներում:

Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 142 էջի վրա, ներառում է 32 աղյուսակ և 9 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են նպատակը և խնդիրները, ատենախոսության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության հիմնական գիտական նորույթը և արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը, ինչպես նաև արդյունքների փորձարկումը, հրապարակումը և ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքի առաջին՝ **«Հարկերի դերի և գործառույթների համակարգումը»** գլխում ուսումնասիրվել են հարկերի դերը և գործառույթների փոխկապվածությունները: Հարկերի դերը, գործառույթները և բովանդակությունը ներկայացվել են աղյուսակի տեսքով՝

Աղյուսակ 1. **Հարկերի դերը, գործառույթները և բովանդակությունը**[1]

Հարկերի դերը	Հարկերի գործառույթները	Բովանդակությունը
Նորմատիվ	Ֆիսկալ	Պետական բյուջեի եկամտային մասի ձևավորում
Սոցիալական	Կարգավորիչ	Եկամուտների, ոլորտների, տարածքների, տարբեր հարկերով և տարբեր դրույքաչափերով հարկում, վերաբաշխում
Նպատակային	Խթանիչ	Տնտեսության զարգացում՝ ներդրումների, զբաղվածության, ՀՆԱ-ի աճ: ՀՆԱ-ի կառուցվածքի, առևտրային հաշվեկշռի բարելավում:

Հիմնավորվել է՝ արդյունավետ ֆիսկալ գործառույթը կարող է նպաստավոր լինել, ոչ միայն հարկերի հավաքագրման, այլև՝ տնտեսության աճի տեսանկյունից: Մասնավորապես, այդ միջոցների արդյունավետ ծախսը բերում է նաև խթանիչ և կարգավորիչ գործառույթների իրականացմանը: Եվ հակառակը, խթանիչ և կարգավորիչ գործառույթները, ապահովելով տնտեսական աճ, նպաստում են նաև արդյունավետ հարկահավաքմանը:

Ձևավորվել է հարկման մակարդակի միջակայքը

$$\underline{Հ} \leq Հարկման\ մակարդակ \leq \overline{Հ}$$

$\underline{Հ}$-ն ձևավորվում է՝ ելնելով ֆիսկալ և կարգավորիչ գործառույթներից,

$\overline{Հ}$-ն ձևավորվում է՝ հաշվի առնելով խթանիչ գործառույթը:

Հարկերի նվազագույն դրույքաչափերի ուղեցույցը պետության հիմնական խնդիրների կատարումն է՝ անվտանգության ապահովում, պետական ապարատի գործունեության արդյունավետ իրականացում, առողջապահության, կրթության, գիտության ծախսերի պատշաճ մակարդակի ապահովում:

Հարկման մակարդակի վերին սահմանը չպետք է խոչընդոտի տնտեսության զարգացմանը՝ տնտեսական աճի տեմպին, ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավմանը, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, զբաղվածության աճին: Եթե հարկային դրույքաչափերի արդյունքում գերազանցում է նշված վերին սահմանափակումը, ապա ելնելով հարկերի խթանիչ գործառույթի կատարման անհրաժեշտությունից՝ խնդիր է առաջանում կրճատել հարկման մակարդակը:

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Է. Թավադյան, «Հարկերի գործառույթների և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգումը», «Այլընտրանք», 2020, №1:

Փաստացի ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցույց են հարկման ստորին մակարդակը գնահատելու համար, քանզի դրանով լուծվում են պետության գործունեությունը ապահովող անհրաժեշտ խնդիրները: Խթանիչ գործառույթը ուղեցույց է հարկման վերին սահմանի համար, որը չի կարելի գերազանցել, քանզի դա կարող է խոչընդոտել տնտեսության զարգացմանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հարկային համակարգի մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցվածությունը»** գլխում հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ելնելով հարկերի խթանիչ գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը բնութագրող 4 փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, զբաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:

Դրանք դիտարկվում են որպես միասնական համակարգ, քանզի միայն մեկ ցուցանիշի առանձնացումը չի նպաստում տնտեսության զարգացմանը: Այստեղ գործում է Գուդհարթի օրենքը[2]: Եթե պետությունը ուշադրություն է դարձնում միայն ՀՆԱ-ի աճի վրա, ապա դա չի տալիս հնարավորություն ապահովել կայուն տնտեսական աճ:

Հարկային քաղաքականությունը, խթանիչ գործառույթի առումով, պետք է ուղղված լինի չորս փոխկապակցված նպատակային ցուցանիշների օպտիմալացմանը: Հարկային բարեփոխումները անհրաժեշտ է հաշվի առնել ֆիսկալ գործառույթի տեսանկյունից: Հարկերի նվազեցումը, որը նպաստավոր է խթանիչ գործառույթի համար, պետք է զուգորդվի նաև ծախսերի կարճաժամկետ կրճատմամբ: Ելնելով այդ 4 նպատակային ցուցանիշներից՝ հարկային ֆիսկալ, կարգավորիչ, խթանիչ գործառույթները իրականացնելիս, եկամուտների փոփոխության պարագայում, դրան համապատասխան պարտադիր պետք է փոփոխվեն պետական բյուջեի ծախսերը, քանզի պետական պարտքի մասով առկա է հստակ սահմանափակում:

Հարկային բարեփոխումները, հարկերի խթանիչ գործառույթի առումով, առաջին հերթին պետք է ուղղված լինեն պատրաստի արտադրանքի արտահանման էական աճին և արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացմանը՝ նվազեցնելով կախվածությունը առանձին ապրանքախմբերից: Այսպիսով, հարկերի խթանիչ գործառույթը ստանում է առաջնահերթ դեր պատրաստի արտադրանքի արտահանման և դրա հետ անմիջապես փոխկապակցված գնաճի նվազման առումով:

---

[2] Goodhart C.A.E. Problems of Monetary Management: The U.K. Experience // Papers in Monetary Economics, Reserve Bank of Australia, 1975. pp. 91-121.

Աղյուսակ 2. Հարկային բարեփոխումների SWOT վերլուծություն[3]

Առավելություններ

- Հարկային եկամուտների աճ
- Տնտեսական աճի խթանում
- Աշխատատեղերի ստեղծում
- Օտարերկրյա ներդրումների ներգրավում
- Մրցունակության աճ

Թերություններ

- Հարկային եկամուտների կրճատում
- Անհավասարության աճ
- Բարդություն և վարչական բեռ
- Ազդեցությունը ՓՄՁ-ների վրա

Հնարավորություններ

- Տնտեսական աճը ապահովող ոլորտների զգալի խթանում
- Զբոսաշրջային ներուժ
- Գործարար միջավայրի բարելավում
- Արտահանման էական աճ

Մարտահրավերներ

- Աշխարհաքաղաքական անորոշություն
- Կախվածություն արտաքին գործոններից
- Ֆինանսական խնդիրներ
- 2020 թվականի պատերազմի ազդեցություն
- Կառուցվածքային հարցեր
- Աշխատաշուկայի հիմնախնդիրները

Ատենախոսությունում հարկային բարեփոխումներ իրականացնելիս վերը նշված նպատակներին հասնելու համար ներկայացվել են հետևյալ պայմանները.

[3] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Կանխատեսվող հարկային եկամուտներ ≥ իրական հարկային եկամուտներ:

Ավելի խիստ պայման է հետևյալը.

$$\text{կանխատեսվող}\ \frac{\text{հարկեր}}{\text{ՀՆԱ}} \geq \text{իրական}\ \frac{\text{հարկեր}}{\text{ՀՆԱ}}$$

Առաջին պայմանի դեպքում՝ կանխատեսվող հարկային եկամուտների, իրական հարկային եկամուտների գերազանցման դեպքում ՀՆԱ-ի աճը կարող է գերազանցել հարկային եկամուտների աճի տեմպը, որի դեպքում 2-րդ պայմանը չի իրականացվի:

Երկրորդ պայմանը նույնպես պետք է հաշվի առնել, քանզի խթանիչ և սոցիալական գործառույթները առավելագույնս իրականացնելիս պետք է չվնասվի ֆիսկալ գործառույթը՝ հատկապես ՀՀ-ում, որտեղ «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը չի գերազանցում 24%–ը: Տվյալ սահմանափակումը հեղինակի կողմից ներկայացված է «Հարկերի գործառույթների և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգումը» հոդվածում[4]: Հարկերի դրույքաչափերը մի կողմից սահմանափակվում են նրանով, որ չպիտի գերազանցեն մեծություն, որը խոչընդոտում է տնտեսության զարգացմանը, մյուս կողմից՝ չեն կարող լինել նվազ, քան անհրաժեշտ է պետության առանցքային խնդիրները լուծելու համար:

Հարկերի դրույքաչափերի օպտիմալ չափը մոտավոր գնահատելու համար նպատակահարմար է կիրառել հետևյալ սկզբունքը: Որպես կանոն, զգալի տնտեսական աճի տեմպը իրական է այն դեպքում, եթե հարկային դրույքաչափերը էապես մեծ չեն, քան տվյալ երկրի մեկ շնչին ընկնող եկամտի ցուցանիշով համապատասխանող այլ երկրներում, հատկապես՝ նույն տարածաշրջանում կամ միևնույն ինտեգրացիոն միավորումում:

Ֆիսկալ գործառույթի տեսանկյունից, Հայաստանում հարկերի օպտիմալ չափը գնահատելու համար անհրաժեշտ է գնահատել մեր երկրում հարկային դրույքաչափերը այն երկրների դրույքաչափերի հետ, որոնք ունեն Հայաստանի հետ համեմատելի զարգացման մակարդակ և որոնց հետ մեր առևտրաշրջանառությունը զգալի է:

Ատենախոսությունում համեմատվել են Հայաստանի և նշված պայմաններին համապատասխանող երկրների հարկային դրույքաչափերը: Տվյալ համեմատությունից ելնելով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում հարկային դրույքաչափերը բարձր են քան տվյալ երկրներում, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսության աճի վրա:

Պետք է նշել, որ հարկերի նվազեցման պայմաններում ծախսերի արդյունավետության գնահատումը խիստ նպատակահարմար է: Այդ

[4] Է.Թավադյան, «Հարկերի գործառույթների և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգումը», «Այլընտրանք», 2020, №1:

կրճատումները չպետք է վերաբերվեն պետության կողմից իրականացվող ներդրումներին, որոնց արդյունավետությունը ակնհայտ է, իսկ արդյունավետության գնահատականները հստակ:

Ատենախոսության երրորդ՝ **«Հարկային եկամուտների ազդեցությունը տնտեսական աճի վրա»** գլխում ձևավորվել է ՀՀ հարկային քաղաքականության առաջնահերթ խնդիրը: Այն է՝ պատրաստի արտադրանքի արտահանման և ռազմավարական բնույթի արտադրանքի պայմանների հնարավորինս բարելավում՝ հաշվի առնելով հարկային մուտքերի դինամիկայում չնվազման հիմնախնդիրը և «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը:

Իրականացվել է հարկային եկամուտների փոխկապվածությունների կոռելյացիոն և էկոնոմետրիկ վերլուծություն:



Գծապատկեր 1. Հարկային եկամուտների փոխկապվածությունների կոռելյացիոն մատրից[5]

Հարկային եկամուտների փոխպակվածությունների կոռելյացիոն վերլուծության հիման վրա բացահայտվել են մի քանի օրինաչափություններ:

[5] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:

Մակրոցուցանիշների և հարկային եկամուտների տվյալների գնահատման միջոցով ձևավորված կոռելյացիոն մատրիցը հնարավորություն է տվել բացահայտել մի քանի կարևոր օրինաչափություններ:

1. Ուժեղ դրական կոռելյացիա:
   - Աշխատավարձի և արտահանման միջև առկա է նկատելի փոխկապակցվածություն (0.83),
   - Հարկերի հավաքագրումը ցույց է տալիս ուժեղ փոխկապակցվածություն աշխատավարձի հետ (0,75),
   - Արտահանումը և հարկերի հավաքագրումը ցույց են տալիս չափավոր ուժեղ փոխկապակցվածություն (0,65):
2. Չափավոր հարաբերակցություն:
   - Տնտեսական ակտիվության ցուցանիշը (IEA) ցույց է տալիս կայուն չափավոր փոխկապվածություն հարկերի հավաքագրման հետ (0.57):
3. Թույլ փոխկապվածություն:
   - Սպառողական գների ինդեքսը ցույց է տալիս թույլ փոխկապակցվածություն բոլոր փոփոխականների միջև:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատվել են սեզոնային էֆեկտները:

Սեզոնային էֆեկտներ՝ ապրիլ ամիսը ցուցաբերում է հարկային եկամուտների 29.61% դրական էֆեկտ ($p < 0.001$), ինչը պայմանավորված է նախորդ տարվա շահութահարկի հանձման հաշվետվության վերջնաժամկետով: Մնացած ամիսները հիմնականում ցուցաբերում են բացասական էֆեկտներ՝ հատկապես փետրվարը (-34.91%), օգոստոսը (-41.17%) և նոյեմբերը (-32.95%), որոնք բոլորն էլ վիճակագրորեն նշանակալի են:

Ատենախոսությունում մշակվել է ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավման և զբաղվածության աճին նպաստող մաքսատուրք:

Հարկային առանցքային գործառույթները, հարկային բարեփոխումները պետք է ուղղված լինեն ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավմանը և զբաղվածության աճին[6]: Առաջնահերթ խնդիր է պատրաստի արտադրանքի արտահանման զգալի աճը, նաև հաշվի առնելով անվտանգության կարևորագույն խնդիրը՝ ժամանակակից ռազմամթերքի արտադրության աճի էական խթանումը:

Հարկային բարեփոխումների սցենարները պետք է ուղղված լինեն այս առանցքային խնդրի կատարմանը՝ հաշվի առնելով հարկային մուտքերի դինամիկայում չնվազման պայմանը, նաև՝ «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը: Ատենախոսությունում առաջարկվել են հարկային բարեփոխումներ՝ շահութահարկի և արտահանման մաքսատուրքի վերաբերյալ: Գնահատվել են շահութահարկի և արտահանման մաքսատուրքի հնարավոր

[6] Այս վերլուծությունը հեղինակի կողմից իրականացվել է հետևյալ գիտական հոդվածում՝ E.Tavadyan, «The Possible Scenarios of Tax Reforms» // «Alternative», 2021, №4:

դրույքաչափերը, որոնց դեպքում դրանք նպաստավոր են տնտեսության համար և դրա հետ մեկտեղ չեն հակասում հարկային համակարգի ֆիսկալ գործառույթին:

Հարկերի խթանիչ գործառույթի առումով կարևորագույն դեր ունի շահութահարկը: Տնտեսության զարգացման տեսանկյունից նպատակահարմար է տվյալ հարկի ավելի ցածր դրույքաչափի կիրառումը, առաջին հերթին՝ պատրաստի արտադրանքի արտահանման և ռազմավարական բնույթի արտադրանքի համար: Ռազմական ապրանքների համար, հաշվի առնելով մեր իրավիճակը, նպատակահարմար է կիրառել նույնիսկ շահութահարկի զրոյական դրույքաչափ:

Ելնելով հարկերի սոցիալական դերից և կարգավորիչ գործառույթից, առաջնահերթ է ապահովել առավելագույն զբաղվածություն հատկապես սահմանամերձ շրջաններում: Հաշվի առնելով դրանց հարկային մուտքերի ծավալը պետական բյուջեում՝ հարկային արտոնությունների կիրառումը տվյալ շրջաններում որոշիչ դեր չունի պետական բյուջեի ձևավորման տեսանկյունից: Այստեղ նպատակահարմար է կիրառել զբաղվածության աճի համար եկամտային հարկի, ինչպես նաև շահութահարկի էապես ավելի ցածր դրույքաչափ: «Հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը այդ արտոնությունից զգալի չի նվազի՝ նպաստելով զբաղվածության աճին և անվտանգության ամրապնդմանը:

«Հարկեր-ՀՆԱ» հարաբերակցության վրա ֆիսկալ առումով դրական կանդրադառնա հումքի վրա արտահանման մաքսատուրքը: Դրա հետ մեկտեղ այդ քայլը կնպաստի պատրաստի արտադրանքի աճին երկրում, փաստացի այս քայլը նպաստավոր է և՛ ֆիսկալ, և՛ պատրաստի արտադրանքի արտահանման տեսանկյունից՝ խթանիչ ու կարգավորիչ գործառույթների առումով: Այստեղ արտահանման մաքսատուրքը պետք է զուգորդվի սահմանային գների կիրառումով: ԵԱՏՄ-ում ամենամեծ տնտեսական ներուժ ունեցող Ռուսաստանում գունավոր մետաղների համար կիրառվում է արտահանման բազային մաքսատուրք՝ 15 տոկոսի չափով[7]: Նպատակահարմար է այդ կարգի մաքսատուրք կիրառել նաև Հայաստանում՝ հատկապես հումքի արտահանման դեպքում:

Հարկային դրույքաչափը սահմանելիս անհրաժեշտ է գնահատել զգայունության շեմը, այսինքն՝ մեծացնելով տվյալ հարկատեսակը, նպատելով ֆիսկալ գործառույթի իրականացմանը, դա պետք է իրականում խրախուսի նաև պատրաստի արտադրանքի արտահանման ծավալների, ինչպես նաև զբաղվածության աճը: Չափազանց կարևոր է խրախուսել զբաղվածության աճը, քանզի գործազրկությունը Հայաստանում չափվում է երկնիշ թվով[8]:

Համալիր հարկային փոփոխությունները, խթանիչ գործառույթի

---

[7] Правительство утвердило временные пошлины на экспорт металлов, Постановление от 25 июня 2021 года №988, government.ru/news/42613

[8] Աղբյուրը՝ https://www.statista.com/statistics/440639/unemployment-rate-in-armenia/

տեսանկյունից նպաստելով տնտեսական աճը բնութագրող առանցքային մակրոցուցանիշների՝ ՀՆԱ-ի, արտահանման և զբաղվածության մակարդակի բարելավմանը, դրա հետ մեկտեղ պետք է չնվազեցնեն ֆիսկալ գործառույթի առումով պետական բյուջեի մուտքերը: Այստեղ առկա է տնտեսական աճի և պետական բյուջեի կատարման խնդիրների համակարգված լուծման անհրաժեշտությունը: Կարևոր է նաև էապես մեծացնել ծախսերի արդյունավետությունը՝ ինչպես կառուցվածքի, այնպես էլ՝ իրականացման առումով:

Որպեսզի արտահանման մաքսատուրքն հումքի արտահանման վրա էական բացասական ազդեցություն չթողնի իր ֆիսկալ գործառույթը իրականացնելու պարագայում, նպատակահարմար է, որպես ուղեցույց, կիրառել արտահանման մաքսատուրքի սահմանման համար հետևյալ բանաձևը.

$$\frac{P_{max} - P_{min}}{P_{max}} * 100,$$

որտեղ P_{max}-ը վերջին 10 տարիների ընթացքում տվյալ հումքի առավելագույն գինն է,

P_{min}-ը տվյալ ժամանակաշրջանի համար նվազագույն գինը:

Ընդ որում, երբ տվյալ տարվա հումքի միջազգային գինն ավելի ցածր է, քան P_{min} -ը, ապա տվյալ դեպքում արտահանման հարկը չի կիրառվում:

$P_T \leq P_{min}$

Որտեղ P_T-ն տվյալ տարում հումքի գինն է:

Եթե $P_{min} < P_1 \leq P_{max}$

Այդ դեպքում տվյալ տարբերության համար՝ P_{max}-P_{min}, կիրառվում է արտահանման մաքսատուրքի դրույքաչափը:

Իսկ եթե տվյալ տարվա գինը գերազանցում է վերջին 10 տարիներում տվյալ հումքի համար մաքսիմալ գինը, ապա այդ տարբերության ամբողջ հասույթը գանձվում է պետական բյուջե:

$P_T > P_{max}$

P_1 -P_{max} – գանձվում է պետական բյուջե:

Տվյալ հարկատեսակից պետական բյուջե գանձվող միջոցները ուղեցույց են հանդիսանում շահութահարկի ավելի ցածր դրույքաչափի կիրառման համար պատրաստի արտադրանքի արտահանման դեպքում: Այստեղ ֆիսկալ գործառույթը, արտահանվող հումքի դեպքում, հնարավորություն է տալիս ակտիվորեն կիրառել խթանիչ գործառույթը պատրաստի արտադրանքների արտահանման համար:

Ստորև ներկայացված է պղնձի խտանյութի արտահանման համար ձևավորած սկզբունքի գնահատումը: Պղնձի գինը վերջին 10 տարիների ընթացքում ներկայացված է գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2. Պղնձի գինը 2015-2025 թվականներին[9]

Ըստ գծապատկեր 2-ի պղնձի նվազագույն գինը կազմել է 2016թ. հունվարին՝ 4.533, իսկ առավելագույնը՝ 2024 թվական մայիսին եղել է 10.889 դոլար 1 տոննայի համար: Կարճ ժամանակաշրջանում՝ օգոստոսի 5-ին 2022թ.-ին տեղի է ունեցել գնի անկում մինչև 2.421 դոլար տոննայի համար: Դա շատ կարճաժամկետ է եղել և տեղի է ունեցել փաստացի ճգնաժամային իրավիճակում, այդ ցուցանիշը նպատակահարմար չէ հաշվի առնել: Նշենք, որ 2025 թվականին գինը ձևավորվում է 9000 դոլարի շրջանակներում[10]:

Նույն ժամանակաշրջանում պղնձի խտանյութի արտահանման դինամիկան հետևյալն է՝



Գծապատկեր 3. Պղնձի խտանյութի արտահանումը Հայաստանից 2007-2024 թթ. (հազ. տոննա)[11]

---

[9] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:

[10] Աղբյուրը՝ https://www.elec.ru/lme/copper, График цены на медь (LME.Copper, USD за тонну), https://hy.calcprofi.com/Pghindz-gnery.html, Պղնձի գնի պատմությունը 2012-2017:

[11] Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից ՀՀ Վիճակագրական կոմիտեի՝ ըստ ապրանքային անվանացուցակի արտաքին առևտրի տվյալների բազայի հիման վրա https://armstat.am/am/?nid=717

Փաստացի գների տատանումը էապես չի անդրադարձել արտահանման ծավալների դինամիկայի վրա:

Նույնիսկ պղնձի նվազագույն գնի պայմաններում 2016 թ.-ին ՀՀ-ից պղնձի խտանյութի արտահանման ծավալների կրճատում չի արձանագրվել, գրանցվել է արտահանման ծավալների աճ: 900 ԱՄՆ դոլարը (Pmin) կարող է ընդունվել, որպես ուղեցույց պղնձի խտանյութի նվազագույն գնի համար, իսկ 2150 ԱՄՆ դոլարը (Pmax) կարող է ընդունվել որպես ուղեցույց առավելագույն գնի համար:

Արտահանման մաքսատուրքի կիրառումը, չնվազեցնելով խթանիչ գործառույթի դերը, հատկապես հումքի արտահանման դեպքում, էապես մեծացում է հարկային համակարգի ֆիսկալ գործառույթի դերը տվյալ ոլորտում՝ դրանով իսկ նպաստելով պատրաստի արտադրանքի արտահանմանը և աշխատատեղերի աճին այդ ոլորտում:

Դա նաև հնարավորություն կտա, կիրառելով շահութահարկի դիֆերենցված տարբերակը, համապատասխանաբար նվազեցնելու շահութահարկի դրույքը արտահանվող պատրաստի արտադրանքի համար: Դա զգալի կմեծացնի այդ հարկատեսակի խթանիչ գործառույթն այդ կարգի արտադրանք արտադրելու և արտահանելու տեսանկյունից:

Ելնելով հեղինակի կողմից ձևավորված սկզբունքից[12], և որպես հիմք ընդունելով Հայաստանից արտահանվող պղնձի խտանյութի գինը 2016 թվականին, առաջարկվում է, մինչև վերջին 10 տարվա նվազագույն գնի դեպքում, կիրառել 0 տոկոս արտահանման մաքսատուրքի դրույքաչափ, առավելագույն և նվազագույն տարբերության համար՝ 15 տոկոս, ինչը տարածաշրջանում մրցունակության տեսանկյունից համահունչ է Ռուսաստանում կիրառվող հարկատեսակներին: Գնի մաքսիմումը գերազանցելու պարագայում այդ տարբերությունը նպատակահարմար է գանձել բյուջեի պահուստային ֆոնդ: Տվյալ սկզբունքը կիրառելի է չմշակված հումքի արտահանման պարագայում:

Փաստացի այս կարգի հարկային քաղաքականության փոփոխությունը և՛ մեծացնում է հարկային համակարգի ֆիսկալ գործառույթի դերը, և՛ պատրաստի արտադրանքի արտահանման համար խթանիչ գործառույթի դերը:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները՝ հարկային քաղաքականության՝ ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցության գնահատման տեսական ուսումնասիրության և գործնական վերլուծության հիման վրա: Վերջիններս համառոտ ներկայացված են ստորև.

[12] E.Tavadyan, «The Possible Scenarios of Tax Reforms», Alternative, №4, 2021:

• Դիտարկելով հարկային քաղաքականության գործառույթները, հիմնավորվել է, որ ֆիսկալ գործառույթը ուղղված է առաջին հերթին անվտանգության ապահովմանը, պետական ապարատի գործունեության արդյունավետ իրականացմանը՝ առողջապահության, կրթության, գիտության ծախսերին:

Կարգավորիչ գործառույթը ազդում է հարկերի դրույքաչափերի վրա՝ ելնելով տարածքից, ոլորտից և բնակչության խմբերից: Կարգավորիչ գործառույթը հատկապես կարևորագույն դեր է ստանում փոխակերպվող տնտեսությամբ երկրներում, որտեղ բարեփոխումներ իրականացնելիս հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սոցիալական գործոնի վրա:

Խթանիչ գործառույթը հնարավորություն է ստեղծում ապահովել տնտեսության զարգացում՝ ՀՆԱ-ի աճի, ՀՆԱ-ի կառուցվածքի, առևտրային հաշվեկշռի բարելավման, զբաղվածության աճի միջոցով:

• Ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցույց են հարկման ստորին մակարդակը գնահատելու համար, քանզի դրանով լուծվում են պետության գործունեությունը ապահովող անհրաժեշտ խնդիրները: Խթանիչ գործառույթը ուղեցույց է հարկման վերին սահմանի համար, որը չի կարելի գերազանցել, քանզի դա կարող է խոչընդոտել տնտեսության զարգացմանը:

Հարկային մակարդակի սահմանափակումները ատենախոսությունում ներկայացված են հետևյալ բանաձևի տեսքով:

$$\underline{Հ} \leq Հարկման մակարդակ \leq \overline{Հ}$$

$\underline{Հ}$-ն ձևավորվում է՝ ելնելով ֆիսկալ և կարգավորիչ գործառույթներից,

$\overline{Հ}$-ն ձևավորվում է՝ հաշվի առնելով խթանիչ գործառույթը:

• Հարկային քաղաքականությունը, խթանիչ գործառույթի առումով, պետք է ուղղված լինի չորս փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի, առևտրային հաշվեկշռի, զբաղվածության, գնաճի ցուցանիշների բարելավմանը:

Հարկերի դրույքաչափերի բարձրացումը նպաստում է ֆիսկալ գործառույթի կատարմանը: Սակայն այստեղ առկա է դրանց օպտիմալ չափի հիմնախնդիրը: Ծախսերի իրականացման միջոցով ֆիսկալ գործառույթի դերի բարձրացումը տնտեսական աճի տեսանկյունից ունի հագեցվածության խնդիր, եթե ծախսերի միջոցով չեն կատարվում արդյունավետ ծրագրեր, ապա հարկերի դրույքաչափի աճը բերելու է ՀՆԱ-ի և տնտեսական աճի տեմպի նվազմանը:

• Հարկերի դրույքաչափերի մեծությունը մոտավոր գնահատելու համար նպատակահարմար է կիրառել հետևյալ սկզբունքը: Որպես կանոն, զգալի տնտեսական աճի տեմպը իրական է այն դեպքում, եթե հարկային դրույքաչափերը էապես մեծ չեն, քան տվյալ երկրի մեկ շնչին ընկնող եկամտի

ցուցանիշով համապատասխանող այլ երկրներում, հատկապես՝ նույն տարածաշրջանում կամ միևնույն ինտեգրացիոն միավորումում: Ատենախոսությունում ներկայացված էմպիրիկ վերլուծությունից հետևում է, որ հարկային դրույքաչափերը մեր երկրի համար ավելի բարձր են, քան նշված երկրներում, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսական աճի վրա:

• Հարկային եկամուտների և առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության գնահատումը ցույց է տալիս հարկերի հավաքագրման ուժեղ փոխկապակցվածություն աշխատավարձի հետ (0,75), չափավոր ուժեղ փոխկապվածություն արտահանման հետ (0,65), կայուն, չափավոր փոխկապվածություն տնտեսական ակտիվության ցուցանիշի հետ (0.57) և թույլ փոխկապվածություն սպառողական գների ինդեքսի հետ: Սեզոնային մոդելը ցույց է տալիս հարկահավաքման զգալի տատանումներ որոշակի ամիսների ընթացքում: Սեզոնային էֆեկտները տալիս են ավելի քան 30% լրացուցիչ բացատրություններ:

Հարկային առանցքային գործառույթները, հարկային բարեփոխումները պետք է ուղղված լինեն ՀՀ առևտրային հաշվեկշռի բարելավմանը և զբաղվածության աճին: Առաջնահերթ խնդիր է պատրաստի արտադրանքի արտահանման զգալի աճը, նաև հաշվի առնելով անվտանգության կարևորագույն խնդիրը՝ ժամանակակից ռազմամթերքի արտադրության աճի էական խթանումը:

Հարկային բարեփոխումների առաջնահերթ խնդիրը կարելի է ձևակերպել այսպես.

Պատրաստի արտադրանքի արտահանման և ռազմավարական բնույթի արտադրանքի մաքսիմում՝ հաշվի առնելով հարկային մուտքերի դինամիկայում չնվազման պայմանը և նաև «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը:

• Հարկերի խթանիչ գործառույթի առումով կարևորագույն դեր ունի շահութահարկը: Տնտեսության զարգացման տեսանկյունից նպատակահարմար է տվյալ հարկի ավելի ցածր դրույքաչափի կիրառումը, առաջին հերթին՝ պատրաստի արտադրանքի արտահանման և ռազմավարկան բնույթի արտադրանքի համար: Ավելացված արժեքի ավելի ցածր դրույքաչափի կիրառումը էական խթանիչ ազդեցություն չի ունենա արտահանման վրա, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանողների համար, քանզի վճարվում է արտահանվող երկրում: Հաշվի առնելով ԱԱՀ-ի ֆիսկալ դերը, պետական բյուջեի և «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցության չնվազման տեսանկյունից, այդ հարկատեսակի համար կարող են մասնակի կիրառվել

հարկային արտոնություններ՝ սահմանամերձ շրջաններում և ժամանակակից ռազմամթերք արտադրելու համար:

• Ելնելով հարկերի սոցիալական դերից և կարգավորիչ գործառույթից, առաջնահերթ է ապահովել առավելագույն զբաղվածություն հատկապես սահմանամերձ շրջաններում: Հաշվի առնելով դրանց ծավալը պետական բյուջեում՝ հարկային արտոնությունների կիրառումը տվյալ շրջաններում որոշիչ դեր չունի պետական բյուջեի ձևավորման տեսանկյունից: Այստեղ նպատակահարմար է կիրառել զբաղվածության աճի համար եկամտային հարկի, ինչպես նաև շահութահարկի էապես ավելի ցածր դրույքաչափ: «Հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը այդ արտոնությունից զգալի չի նվազի՝ նպաստելով զբաղվածության աճին և անվտանգության ամրապնդմանը:

• «Հարկեր/ՀՆԱ» հարաբերակցության վրա ֆիսկալ առումով դրական կանդրադառնա հումքի վրա արտահանման մաքսատուրքը: Դրա հետ մեկտեղ այդ քայլը կնպաստի պատրաստի արտադրանքի արտադրության զարգացմանը և զբաղվածության աճին, փաստացի այս քայլը նպաստավոր է և՛ ֆիսկալ, և՛ պատրաստի արտադրանքի արտահանման տեսանկյունից՝ խթանիչ ու կարգավորիչ գործառույթների առումով:

• Արտահանման մաքսատուրքի կիրառումը, չնվազեցնելով խթանիչ գործառույթի դերը՝ հատկապես հումքի արտահանման դեպքում, էապես մեծացում է հարկային համակարգի ֆիսկալ գործառույթի դերը տվյալ ոլորտում՝ դրանով իսկ նպաստելով պատրաստի արտադրանքի արտահանմանը այդ ոլորտում և աշխատատեղերի աճին: Որպեսզի արտահանման մաքսատուրքը իր ֆիսկալ գործառույթը իրականացնելիս հումքի արտահանման վրա էական բացասական ազդեցություն չթողնի, նպատակահարմար է, որպես ուղեցույց, կիրառել արտահանման մաքսատուրքի սահմանման համար աշխատանքում մշակված բանաձևը:

Աշխատանքում առաջարկվում է կիրառել հետևյալ մաքսատուրքը՝

1. $P<P_{min}$ – 0 տոկոս մաքսատուրք,
2. $P_{max} \geq P \geq P_{min}$, $P-P_{min}$ տարբերության համար վճարվում է մաքսատուրք,
3. $P>P_{max}$, $P_{max}-P$-ը գանձվում է պետբյուջե:

Այս կարգի հարկային քաղաքականության փոփոխությունը և՛ մեծացնում է հարկային համակարգի ֆիսկալ գործառույթի դերը, և՛ պատրաստի արտադրանքի արտահանման համար խթանիչ գործառույթի դերը:

• Հարկային դրույքաչափը սահմանելիս անհրաժեշտ է գնահատել զգայունության շեմը, այսինքն՝ մեծացնելով տվյալ հարկատեսակը, նպատելով ֆիսկալ գործառույթի իրականացմանը, դա պետք է իրականում խրախուսի նաև

պատրաստի արտադրանքի արտահանման ծավալների, ինչպես նաև զբաղվածության աճը: Չափազանց կարևոր է խրախուսել զբաղվածության աճը, քանզի գործազրկությունը Հայաստանում չափվում է երկնիշ թվով:

• Համալիր հարկային փոփոխությունները, խթանիչ գործառույթի տեսանկյունից նպաստելով տնտեսական աճը նկարագրող առանցքային մակրոցուցանիշների՝ ՀՆԱ-ի, արտահանման և զբաղվածության մակարդակի բարելավմանը, դրա հետ մեկտեղ պետք է չնվազեցնեն ֆիսկալ գործառույթի առումով պետական բյուջեի մուտքերը: Այստեղ առկա է տնտեսական աճի և պետական բյուջեի կատարման տեսանկյունից օպտիմալ բարելավման կարևորագույն խնդիրը: Կարևոր է նաև էապես մեծացնել ծախսերի արդյունավետությունը, ինչպես կառուցվածքի, այնպես էլ իրականացման առումով:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են 7 գիտական հոդվածներում՝

1. Է. Թավադյան, «ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների վրա հարկերի խթանիչ գործառույթի ազդեցության վերլուծությունը» // «Տարածաշրջան և աշխարհ», 2021, N6, էջ 151-156:
2. Է.Թավադյան, «Հարկային համակարգի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը» // «Հայկական տնտեսագիտական հանդես», 2021, N2, էջ 101-112:
3. Է.Թավադյան, «Հարկերի գործառույթների և ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգումը», «Այլընտրանք», 2020, N1, էջ 360-365:
4. Э.Тавадян, «Систематизация функций налогов в стране с трансформирующейся экономикой» // «Научный форум: экономика и менеджмент», 2020, N5, С. 26-31.
5. Է.Թավադյան, «Հարկերի գործառույթների փոխկապվածությունը» // «Այլընտրանք» 2021, N3, էջ 118-128:
6. E.Tavadyan, «The possible scenarios of tax reforms» // «Alternative», 2021, N4, pp. 93-99.
7. Аг.Тавадян, Э.Тавадян, «Парадокс налоговых поступлений: вызовы и перспективы налоговой политики Армении» // Вестник РАУ. Серия: Гуманитарные и общественные науки, 2024, N4, С.12-25.

ТАВАДЯН ЭММА АШОТОВНА

ОЦЕНКА ВЛИЯНИЯ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ НА МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 04-ого ноября 2025 года, в 14^{00}, на заседании Специализированного совета 008 КВОН РА по экономике при Российско-Армянском университете. Адрес: РА, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Обеспечение устойчивых темпов экономического роста, как известно, напрямую связано с эффективностью налоговой политики, уровнем предпринимательской активности и эффективностью государственного регулирования экономики. Несмотря на то, что в Республике Армения в последние годы наблюдались значительные темпы прироста ВВП и объемов экспорта, экономика страны сталкивается с серьезными препятствиями в своем развитии. Налоговая политика играет ключевую роль в устранении этих препятствий, и эффективный подход к налогообложению имеет решающее значение для экономического развития Армении.

В работе показана взаимосвязь между налоговой политикой и макроэкономическими показателями, характеризующими экономический рост. Предложенные в диссертационном исследовании подходы к анализу налоговых поступлений могут быть применены не только для анализа влияния налоговой политики на экономику Армении, но и других стран со схожими экономическими условиями.

Целью исследования является оценка влияния налоговой политики

Армении на макроэкономические показатели, а также выявление рисков и возможностей дальнейшего развития налоговой политики. Для достижения поставленной цели в работе были поставлены и решены следующие задачи:

- исследовать роль, функции и содержание налоговой системы;
- проанализировать взаимосвязи между налоговой системой и основными макроэкономическими показателями, характеризующими экономический рост;
- систематизировать функции налогов для стран с трансформирующейся экономикой;
- проанализировать динамику и текущие тенденции налоговых поступлений в Республике Армения;
- изучить возможные сценарии налоговой политики Республики Армения;
- на основе взаимосвязи показателей налоговой системы и макроэкономических показателей, характеризующих экономический рост, сформировать верхний и нижний пределы налоговых поступлений;
- представить приоритетные проблемы налоговой реформы и пути их решения;
- оценить взаимосвязь между налоговыми поступлениями и макроэкономическими показателями.

Из выводов, сделанных на основе диссертационного исследования и осуществленного эмпирического анализа, можно выделить следующие результаты, имеющие теоретическое и практическое значение, содержащие элементы **научной новизны.**

1. Оценен диапазон уровней налогообложения. Выявлено, что стимулирующая функция налогов является ориентиром для верхнего предела данного диапазона, а фискальная и регулирующая функции являются ориентиром для нижнего предела диапазона уровней налогообложения.
2. Обосновано, что налоговая политика, исходя из стимулирующей функции налогов, должна способствовать достижению 4

взаимосвязанных целевых индикаторов, характеризующих экономический рост: оптимальный рост ВВП, улучшение состояния торгового баланса, рост занятости и обеспечение стабильности цен.

3. С использованием корреляционных и эконометрических оценок разработана модель и выявлена сильная корреляционная взаимосвязь налоговых поступлений со средней заработной платой и их умеренная зависимость от показателя объемов экспорта и показателя экономической активности.
4. Разработан подход установления экспортной таможенной пошлины на сырье, а также предложено применение в качестве ориентира формулы, составленной на основе максимального и минимального значений цены данной продукции.

EMMA ASHOT TAVADYAN

ASSESSMENT OF THE TAX POLICY IMPACT ON MACROECONOMIC INDICATORS OF THE RA

Abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – «Finance, Accounting».

The defense of the thesis will take place on the 04th of November, 14$^{\underline{00}}$, at 008 Council of Economics of the HESC RA at Russian-Armenian University. Address: 123 Hovsep Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

Ensuring sustainable rates of economic growth, as is known, is directly linked to the effectiveness of tax policy, the level of entrepreneurial activity, and the effectiveness of government regulation of the economy. Although the Republic of Armenia has seen significant GDP and export growth in recent years, the country's economy faces significant development challenges. Tax policy plays a key role in addressing these challenges, and an effective approach to taxation is crucial to Armenia's economic development.

The thesis shows the relationship between tax policy and macroeconomic indicators characterizing economic growth. The approaches to the analysis of tax revenues proposed in the dissertation can be applied not only to analyze the impact of tax policy on the economy of Armenia but also of other countries with similar economic conditions.

The aim of the study is to assess the impact of Armenia's tax policy on macroeconomic indicators characterizing the country's economic growth, as well as to identify risks and opportunities for further development of tax policy. To achieve this goal, the following tasks were set and solved in the work:

- Investigate the role, functions, and content of the tax system,
- Analyze the relationship between the tax system and the main macroeconomic indicators characterizing economic growth,
- Coordinate tax functions for countries with transitional economies,

- Analyze the dynamics and current trends of tax revenues in the Republic of Armenia,
- Study tax policy scenarios of the Republic of Armenia,
- Based on the relationship between the macroeconomic indicators characterizing economic growth and the tax system, to form the upper and lower limits of tax revenues,
- Present main issues of tax reform and direction of their solving,
- Assess the relationship between tax revenues and macroeconomic indicators.

From the conclusions drawn based on the thesis research and empirical analysis carried out, the following results can be highlighted, which have theoretical and practical significance, containing elements of **scientific novelty.**

1. The range of taxation levels has been assessed. It was revealed that the stimulating function of taxes is a guideline for the upper limit of this range, and fiscal and regulatory functions are a guideline for the lower limit of the range of taxation levels.
2. It is substantiated that tax policy, based on the stimulating function of taxes, should contribute to the achievement of 4 interrelated target indicators characterizing economic growth: optimal GDP growth, improvement of the trade balance, employment growth, and ensuring price stability.
3. A model has been developed, through correlation and econometric assessment, and a strong correlation between tax revenues and average wages and a moderate dependence on exports and the indicator of economic activity has been revealed.
4. An approach has been developed for establishing an export customs duty on raw materials; it is proposed to apply a formula as a guideline, formed on the basis of the maximum and minimum value of the price of the given product.